# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
# «ԵԱՍՄ-ԷԱՃԱՊՁԲ-26/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Ք. Երևան 14.01.2026թ

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝
Հանձնաժողովի նախագահ՝
Վահագն Գրիգորյան՝ Գլխավոր ինժեներ
Անդամներ՝
Վահան Գալստյան՝ ՄՌԿ բաժնի պետ
Արսեն Այվազյան՝ ՖՏ բաժնի պետ-գլխավոր հաշվապահ
Արարատ Այվազյան՝ Նյութատնտեսական բաժնի պետ
Կարեն Ալեքսանյան՝ Ավտոպարկի հերթափոխի պետ
Հանձնաժողովի քարտուղար՝
Արսեն Ավագյան՝ Գնումները համակարգող մասնագետ

1. **Տեղեկություն հայտերի բացման, գնահատման օրվա և ժամի մասին.**

«ԵԱՍՄ-ԷԱՃԱՊՁԲ-26/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի հրավերն ու հայտարարությունը հրապարակվել է 2025թ. դեկտեմբերի 19-ին gnumner.am պաշտոնական կայքում և eauction. am համակարգում:
Հայտերի վերջնաժամկետ է սահմանվել 2026թ. հունվարի 07-ը ժամը 14:00-ն:

2. **Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները /անունները/, գնային առաջարկները.**

08.01.2026թ. «ԵԱՍՄ-ԷԱՃԱՊՁԲ-26/2» ծածկագրով հակադարձ աճուրդի ընթացակարգին մասնակիցների գնային առաջարկները հետևյալն են:

| Չ/Հ | Չ/Տ | Ներկայացված հայտեր | Նախահաշվային գին ՀՀ դրամ | Նախնական առաջարկ ՀՀ դրամ | | | Վերջին առաջարկ ՀՀ դրամ | | | Մասնակցի կարգավիճակ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Արժեք | ԱԱՀ | Գին | Արժեք | ԱԱՀ | Գին | |
| 1 | 1 | Prederiksoans LSD | 340000000 | 442000000 | 0 % | 442000000 | 235000000 | 0 % | 235000000 | |
| 1 | 2 | Ռաֆ-Օջախ ՍՊԸ | 340000000 | 283333333 | 20 % | 339999999.6 | 247166666 | 20 % | 296599999.20 | |

3. **Տվյալներ՝ հայտը կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին.**

Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից համակարգում կցված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերի վավերապայմաններին:

4. **Տվյալներ յուրաքանչյուր բացված հայտում փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմանների համապատասխանության մասին.**

«ԵԱՍՄ-ԷԱՃԱՊՁԲ-26/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված կարգով առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված չէին հրավերով սահմանված փաստաթղթերը և բացակայում էր պարտադիր պայման հանդիսացող Հրավերի 1-ին մասի 7-րդ կետով պահանջվող հայտի ապահովումը:

Համաձայն Հրավերի 1-ին մասի 7 կետի 7.6 ենթակետի մասնակցի հայտը ենթակա է մերժման, եթե դրանում բացակայում է հայտի ապահովումը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան:

5. **Հանձնաժողովը որոշեց՝**

Հանձնաժողովը որոշեց մերժել Prederiksoans LSD-ի կողմից ներկայացված հայտը և «ԵԱՍՄ-ԷԱՃԱՊՁԲ-26/2» ծածկագրով ընթացակարգը հայտարարել չկայացած համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի /հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին/:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանուններ:

Հանձնաժողովի
Նախագահ՝ Վ. Գրիգորյան

Անդամներ՝ Վ. Գալստյան

Ա. Այվազյան

Ա. Այվազյան

Կ. Ալեքսանյան

Քարտուղար՝ Ա. Ավագյան